**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» հուլիսի 2025 թվականի N 962**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Ա. ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17/3 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Հովհաննես Գալստյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 25042025-07-0170 վկայական) ***ք. Չարենցավան Ա. Խանջյան փողոց թիվ 17/3*** հասցեում գտնվող 27.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 28.8 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Հովհաննես Գալստյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Հովհաննես Գալստյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 55000 (հիսունհինգ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 129000 (մեկ հարյուր քսանինը հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում ***Հովհաննես Գալստյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Հովհաննես Գալստյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**«23» հուլիսի 2025 թվականի N 961**

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Կարեն Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված 30.0 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023GSHR5K ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 30.0 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Գ. Ռուսովի փողոց թիվ 2/9*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Կարեն Գևորգյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հուլիսի 2025 թվականի N 960

ՊԱՏՃԵՆ

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ 1993 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 7-րդ թաղամաս, 18-րդ շենք բնակարան 7 հասցեի բնակիչ Ջեփյուռ Ոսկանյանի 2025 թվականի հուլիսի 22-ի թիվ 3690/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավանի քաղխորհրդի գործկոմի 1993 թվականի ապրիլի 14-ի «Անհատական բնակարանային շինարարության նպատակով հողատարածություններ հատկացնելու մասին» թիվ 6 որոշման 60.66 կետը շարադրել նոր խմբագրմամբ.

«Ոսկանյան Վաչագան Արամի-ինքը

Ոսկանյան Ջեփյուռ Սարգսի-կինը

Ոսկանյան Հայկ Վաչագանի-որդին

Ոսկանյան Հարություն Վաչագանի-որդին»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» հուլիսի 2025 թվականի N 959**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս. Գևորգյանի 2025 թվականի հուլիսի 15-ի թիվ 101 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ին պատկանող ք. ***Չարենցավան Ս. Մելքոնյան փողոց թիվ 3 /հողամասի մակերես՝ 22.59313 հա/, Ս. Մելքոնյան փողոց թիվ 3/6 /հողամասի մակերես՝ 1.04075 հա/, Ս. Մելքոնյան փողոց թիվ 3/7 /հողամասի մակերես՝ 0.19316 հա/ և Ս. Մելքոնյան փողոց թիվ 3/8 /հողամասի մակերես՝ 0.24069 հա/*** գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան Ս. Մելքոնյան փողոց թիվ 3 /ընդհանուր մակերեսը՝ 24.06773 հա/***:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«23» հուլիսի 2025 թվականի N 958**

**ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՆՎԵՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐԵՆԻՍ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6/4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասի>> օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով Ն. Ալեքսանյանի 2025 թվականի հունիսի 18-ի թիվ 3134/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նվեր Վաչագանի Ալեքսանյանին պատկանող Չարենցավան համայնք, գ. Կարենիս վարչական տարածքում գտնվող 300 քմ մակերեսով անասնաշենքի պահպանման և սպասարկման համար հատկացնել 0.03 հա հողամաս՝ հետագա օտարման գործարքների դեպքում կադաստրային արժեքի վճարման պայմանով՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2025EGXRXX ծածկագրի, նկատի ունենալով, որ հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
2. Առաջացած միավորը հասցեավորել ***Չարենցավան համայնք գ. Կարենիս Արփադրական փողոց թիվ 6/4:***
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշմամբ ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 09.07.2025թ. թիվ 919 որոշումը:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«23» հուլիս 2025 թվականի N 957**

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավագյան | Լևոն | AT0264185 | 30000 | դրամ |
| Պեպանյան | Քրիստինե | 016413163 | 30000 | դրամ |
| Նիկողոսյան | Քրիստինե | AR0313658 | 30000 | դրամ |
| Թորոսյան | Արայիկ | AX0355668 | 30000 | դրամ |
| Նավասարդյան | Ջուլետա | AU0280656 | 25000 | դրամ |
| Սիմոնյան | Արմենակ | 008028334 | 25000 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ** charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«22» հուլիսի 2025 թվականի N 956**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1/16 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Ժիրայր Պեփրոսյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 15072025-07-0054 վկայական*) **ք. Չարենցավան Մ. Խորենացու փողոց 3–րդ փակուղի թիվ 1/16*** հասցեում գտնվող 25.3 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերես՝ 23.2 քմ/ ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 57.6 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Ժիրայր Պեփրոսյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Ժիրայր Պեփրոսյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 43000 (քառասուներեք հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 167000 (մեկ հարյուր վաթսունյոթ հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Ժիրայր Պեփրոսյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Ժիրայր Պեփրոսյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---


**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«21» հուլիսի 2025 թվականի N 955**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Ալեքսանյանի 2025 թվականի հուլիսի 17-ի թիվ 3639/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Արտավազդ Ալեքսանյանին պատկանող ք. ***Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 1/11 /հողամասի մակերես՝ 0.02 հա/ և ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 1/12 /հողամասի մակերես՝ 0.0197 հա/*** գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 1/11 ընդհանուր մակերեսը՝ 0.0397 հա/***:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«21» հուլիսի 2025 թվականի N 954**

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Արսեն Թադևոսյանի կողմից ինքնակամ կառուցված 32.62 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Պիռամիդա» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023F2X4NR ծածկագրի:
2. Տնտեսական շինության սպասարկման նպատակով հատկացնել 65.0 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 4-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 7/1*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արսեն Թադևոսյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«21» հուլիսի 2025 թվականի N 953**

## ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՂԱՄ ՎԱՐԴԳԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով և 59-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ.***

1. Քաղաքացի **Գեղամ Վարդգեսի Հովհաննիսյանի** նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել, լսումների օր նշանակել **2025 թվականի հուլիսի 29-ին, ժամը 11:00-ին,** ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1 հասցեում, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով/:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել քաղաքացի **Գեղամ Վարդգեսի Հովհաննիսյանին**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **Գեղամ Վարդգեսի Հովհաննիսյանին** որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«21» հուլիսի 2025 թվականի N 952**

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հունան Հակոբյան Հարութի*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաք Թումանյան փողոց թիվ 14 տարածքում գտնվող 92քմ մակերեսով հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3673/12 առ 2025 թվականի հուլիսի 21-ի):
Հաշվի առնելով, որ ըստ N1811 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի երրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 106-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Հունան Հակոբյան Հարութի*** անհատ ձեռնարկատիրոջը 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաք Թումանյան փողոց թիվ 14 տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Թույլտվություն N381):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am


### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» հուլիսի 2025 թվականի N 951**

### ԽԱՉԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 10-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՇԵՆՔ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Խ. Մարգարյանի 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 3580/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Խաչիկ Մուշեղի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան 10-րդ թաղամաս 1-ին շենք թիվ 24 հասցեում գտնվող 0.0791 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 38.2 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 25.9 քմ արտաքին մակերեսով քոթեջային տնակը, 12.3 քմ մակերեսով պարիսպը՝ համաձայն հատակագծի և «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2022DIBX4Z ծածկագրի:
2. Օրինական ճանաչված շինությունների համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 64.000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» հուլիսի 2025 թվականի N 950**

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***«Վանսոլ» ՍՊԸ-ի*** տնօրեն Սոս Վարդանյանը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի Շինարարների փողոց թիվ 2 շինության տարածքում գտնվող 18քմ մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից խմիչքների թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3657/12 առ 2025 թվականի հուլիսի 18-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 250718027869030 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի երրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 106-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.***«Վանսոլ» ՍՊԸ-ին*** 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի Շինարարների փողոց թիվ 2 շինության տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից խմիչքների վաճառք (Թույլտվություն N 380)

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«17» հուլիսի 2025 թվականի N 949**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/2 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Հեղինե Նավասարդյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 09072025-07-0178 վկայական*) ք. Չարենցավան 4-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 8/2* հասցեում գտնվող 42.23 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 42.2 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Հեղինե Նավասարդյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Հեղինե Նավասարդյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 84000 (ութսունչորս հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 188000 (մեկ հարյուր ութսունութ հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում ***Հեղինե Նավասարդյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Հեղինե Նավասարդյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2025 թվականի N 948

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1920-Ն որոշումների դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Գ. Մովսիսյանի 2025 թվականի հուլիսի 04-ի թիվ 3496/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Գառնիկ, Սվետիկ, Ֆլորա և Կարինե Մովսիսյաններին պատկանող Չարենցավան համայնք գյուղ Արզական Բարեկամության փողոց 2-րդ փակուղի թիվ 3/1 հասցեում գտնվող 0.01 հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությունը թույլատրել փոխելու այլ հողատեսքից որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
2. Տալ համաձայնություն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Գառնիկ, Սվետիկ, Ֆլորա և Կարինե Մովսիսյաններին պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բարեկամության փողոց 2-րդ փակուղի թիվ 3 /հողամասի մակերես՝ 0.1654 հա/ և Չարենցավան համայնք գյուղ Արզական Բարեկամության փողոց 2-րդ փակուղի թիվ 3/1 հողամասի մակերես՝ 0.01 հա/*** գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բարեկամության փողոց 2-րդ փակուղի թիվ 3 /ընդհանուր մակերեսը՝ 0.1754 հա/***:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«17» հուլիսի 2025 թվականի N 947**

**ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***«Սմոք Հաուս» ՍՊԸ-ի*** տնօրեն Արմեն Ծատուրյանը դիմել է իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան Խանջյան փողոց թիվ 13 շինության տարածքում գտնվող 26քմ մակերեսով առևտրի սրահում, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3643/12 առ 2025 թվականի հուլիսի 17-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 105905 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի երկրորդ կիսամյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 106-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.***«Սմոք Հաուս» ՍՊԸ-ին*** 2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան Խանջյան փողոց թիվ 13 շինության տարածքում գտնվող առևտրի սրահում, իրականացնելու ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Թույլտվություն N379)

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնիպետ Վ. Բարսամյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«17» հուլիսի 2025 թվականի N 946**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20/3 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Ասլիկ Ալոյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ N 02072025-07-0091 վկայական*) **ք. Չարենցավան Օղակային փողոց թիվ 20/3*** հասցեում գտնվող 17.4 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 1.5 քմ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 28.8 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Ասլիկ Ալոյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Տնտեսական շինության 1 քառակուսի մետրի համար՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Ասլիկ Ալոյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ՝ տնտեսական շինության գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 129000 (մեկ հարյուր քսանինը հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Ասլիկ Ալոյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Ասլիկ Ալոյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«17» հուլիսի 2025 թվականի N 945**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 29-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի ***Վահագն Սառիկյանը*** դիմել է ք. Չարենցավան 6-րդ թաղամասի 29-րդ շենքի թիվ 29 հասցեով բնակարանի նկատմամբ Չարենցավան համայնքի սեփականության իրավունքը նվիրատվությամբ օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից բնակարանային հարցերով հանձնաժողովի 2025 թվականի մարտի 27-ի թիվ 1 նիստի արձանագրությունը, համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ 63-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 29-րդ շենքի թիվ 29, մեկ սենյակից բաղկացած 17.12 (տասնյոթ ու տասներկու) քմ ընդհանուր մակերեսով, 3900000 (երեք միլիոն ինը հարյուր հազար) դրամ շուկայական արժեքով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել վարձակալին որպես նրա սեփականություն, ինչի մասին կնքել համապատասխան պայմանագիր:
2. Բնակարանի սեփականատեր ճանաչել՝ ***Վահագն Սառիկյանին***
   ***Կարինե Սառիկյանին***
   ***Ասփղիկ Ցականյանին***
3. Հիշյալ բնակարանը սահմանված կարգով հանել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկից:
4. Սեփականատերը պարտավոր է վճարել՝
   Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար Չարենցավանի համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ
5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** կնքել նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«17» հուլիսի 2025 թվականի N 944**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի ***Կարեն Մնացականյանը*** դիմել է ք. Չարենցավան 2-րդ թաղամասի 3-րդ շենքի թիվ 8 հասցեով բնակարանի նկատմամբ Չարենցավան համայնքի սեփականության իրավունքը նվիրատվությամբ օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից բնակարանային հարցերով հանձնաժողովի 2025 թվականի մարտի 27-ի թիվ 1 նիստի արձանագրությունը, համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ 63-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամասի3-րդ շենքի թիվ 8, երեք սենյակից բաղկացած 63.89 (վաթսուներեք ու ութսունինը) քմ ընդհանուր մակերեսով, 24300000 (քսանչորս միլիոն երեք հարյուր հազար) դրամ շուկայական արժեքով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել վարձակալին որպես նրա սեփականություն, ինչի մասին կնքել համապատասխան պայմանագիր:
2. Բնակարանի սեփականատեր ճանաչել՝ ***Կարեն Մնացականյանին:***
3. Հիշյալ բնակարանը սահմանված կարգով հանել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկից:
4. ***Կարեն Մնացականյանը*** պարտավոր է վճարել՝
   Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար Չարենցավանի համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ
5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** կնքել նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«17» հուլիսի 2025 թվականի N 943**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Գագիկ Ծուղունյանի կողմից ինքնակամ կառուցված 24.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Գեոտոպ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023HLQQK9 ծածկագրի:

2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 24.4 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:

3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել ***ք. Չարենցավան Գ. Ռուսովի փողոց 5-րդ փակուղի թիվ 1/27*** հասցեով:

5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Գագիկ Ծուղունյանին՝*** գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---


***ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք***
***Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1***
***Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am***


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«17» հուլիսի 2025 թվականի N 942**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 8-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/5 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Սոֆյա Զարգարյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 09072025-07-0213 վկայական*) **ք. Չարենցավան 8-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1/5*** հասցեում գտնվող 28.3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 28.3 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Սոֆյա Զարգարյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Սոֆյա Զարգարյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 48000 (քառասունութ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 82000 (ութսուներկու հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Սոֆյա Զարգարյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Սոֆյա Զարգարյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«17» հուլիսի 2025 թվականի N 941**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ս. Մելքոնյանի 2025 թվականի հունիսի 19-ի թիվ 3138/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Սամվել Մելքոնյանին*** սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 27-րդ փողոց թիվ 21 հասցեի հողամասը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 27-րդ փողոց թիվ 21*** (հողամասի մակերեսը՝ 650 քմ) և ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 27-րդ փողոց թիվ 21/1*** (հողամասի մակերեսը՝ 650 քմ) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**«17» հուլիսի 2025 թվականի N 940**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Սահակյանի 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 3151/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Ասփղիկ Սահակյանին*** սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 13-րդ փողոց թիվ 7 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 13-րդ փողոց թիվ 7*** (հողամասի մակերեսը՝ 876.9 քմ) և ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 13-րդ փողոց թիվ 7 /1*** (հողամասի մակերեսը՝ 823.1 քմ) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Արամ Աջաբխանյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«16» հուլիսի 2025 թվականի N 939**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 7-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Վիլեն Օհանջանյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 09072025-07-0070 վկայական) ***ք. Չարենցավան Մ. Խորենացու փողոց 7-րդ փակուղի թիվ 4*** հասցեում գտնվող 32.3 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և 32.3 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Վիլեն Օհանջանյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 15060 (տասնհինգ հազար վաթսուն) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Վիլեն Օհանջանյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 487000 (չորս հարյուր ութսունյոթ հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 94000 (իննսունչորս հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Վիլեն Օհանջանյանի*** կողմից:

6.Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Վիլեն Օհանջանյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**